



Լևոն Խեչոյան

Ամբոխը

Ժողովուրդը վագում էր: Ջիուդ Մուկուչի Մորիկին տարել էին գոմերը խեղդելու: Գետի վրա արդեն սառույց էր կապել: Մեծահասակներն ու երեխաներս, սայթաքուն սառույցի վրա ընկնելով, սահելով ու սառցի կտորներ գցելով բերաններս, վագում էինք:

Ջիուդ Մուկուչը տեղափոխվում էր քաղաքում ապրելու, իսկ շանը չէր ցանկանում որեւէ մեկին թողնել:

Հովիվներից մի քանիսը, խոր ձյունը լոք տալով, կոլտնտեսության մի տասնհինգ շուն ետեւները գցած, հարայ-հրոցով, նրանց ոգետրելով, գոմերից գալիս էին դեպի գետը՝ ուզում էին ճանապարհը կտրել: Մորիկը, գյուղացիների առաջն ընկած, քշվելու նման, դարձդարձիկ պոչը բարձր պահած, հավասարաքայլ վագում էր:

Վագողներս կանգնեցինք: Մորիկը կանգնել էր, գլուխը բարձրացրած, ուշադիր նայում էր աղմկող հովիվներին ու իր ճանապարհը կտրել ցանկացող շներին: Կտրուկ ետ դարձավ, չգիտես՝ գյուղ էր ուզում գնալ, թե ժողովրդի հետ իր ետեւից վագող տիրոջ մոտ՝ հավելու նրա ոտներին: Ջիուդ Մուկուչը կռացավ՝ իբրեւ քար է վերցնում, նրան չթողեց մոտենա, մատների արանքում մամլած ձյունը գցեց բերանը, ասաց. «Էն օրն էլ Դշխուն մամին էր կծել...»: Նրա ներքեւի շրթունքը աննկատելի դողում էր, լսողներից ոչ մեկս էլ չհավատացինք: Գետի ամբողջ սառցակալած լայնքով եւ ձյունառատ, սպիտակ ավերով՝ սեւ շղթա տված, լուռ կանգնել էր ամբոխը՝ վագրից հանգստանում էր ու սպասում: Մորիկը նայեց

մոտեցող շներին, մի պահ գանգուր պոչը իջեցրեց ու նորից գետի հունով վազեց, այս անգամ լեզուն դուրս գցած, հալածվողի նման: Ամբոխն էլ վազեց:

Մորիկը ճանապարհը չէր ծոփ, սառցակալած գետի հունից դուրս չէր գա, չէր շրջանցի իր թիկունքից հոսող ամբոխի սեւ շղթան ու կոլտնտեսության աշնանավար սեւ ու սպիտակ ցելերով պոչը իջեցրած չէր վագի դեպի տուն... Նրա մաքրամաքուր, սպիտակ գույնն ու երբեք չուղղվող դարձդարձիկ պոչը նրան վեհ ու անպարտելի տեսք էին տալիս: Հաբել տացուի պատմածից բոլորն էլ տեղյակ էին գայլերի պատմությանը, ասում էր. «Փայտի էի գնացել, աշուն էր, գիշեր էր, գայլերը վրա էին տվել»: Ասում էր. «Չգիտեմ՝ ում, բայց գոռում էի... չգիտեմ՝ ինչքան էի գոռացել... մեկ էլ տեսնեմ՝ ճերմակ ճերմակ մոմի նման վատվող մի բան ընկավ գայլերի մեջ: Տիրումերը... բոլորին ցիրուցան արեց, քեց ծմակուտները...»:

Նրա բացառիկ սպիտակության համար կանայք ասում էին. «Սուրբ Սարգսի շանը շատ է նման»: Ասում էին. «Հողեղեն ոչ մի կենդանի այդպես ծաղկած բալենու ճերմակություն չի կարող ունենալ»:

Շրջկենտրոնից ոտքով գյուղ եկողները գիշերով, եթե «Քոռ կամրջի» մոտ երգող ջրահարսների էին հանդիպում ու ընկնում նրանց հնայքի տակ, Մորիկը մի ակնթարթում գյուղից հասնում էր, ջրահարսներին քշում ճահճուտների խորքերը, ազատում «Կորած ժամի» մոտ սատանաների շուրջկալի մեջ ընկած որսորդներին: Գյուղացիք ասում էին. «Քամին գրքի նման կարդացող շուն է»: Հովիվներն ու շները կտրեցին նրա ճանապարհը: Երկուստեք նայում էին իրար: Նրանք Մորիկին տեսնելիս միշտ էլ ճանապարհները փոխում էին՝ նրա անորոշության հասնող սպիտակությունից վախեցած: Հիմա նրանք կաղկանձում էին, իրար կծոտում ու չէին համար ձակվում Մորիկին մոտենալ: Հետո նույն համաչափ քայլքով սկսեց վազել: Ամբոխն էլ վազեց:

Հովիվների հարայ-հրոցից շները քիչ էին բորբոքվում, իմիջիայոց պարտականություն կատարելու պես վազում էին Մորիկի կողքով: Հովիվներից մեկը շտապով ձնագնդի շինեց ու խփեց: Կանգնեց, գորշավուն աչքերը հառած, մարդու հայացքով նայում էր խփողին: Չհուղ Մուկուչը, բռան մեջ մամլած ձյունը բերանը գցելով, ասաց. «Ծերացել է: Էն օրը Մաղաք տացուս պատահական

նորքն էր կոխել՝ հարձակվել էր վրան...»: Նրա ներքեի շրթունքը աննկատելի դողում էր, լսողներից ոչ մեկս էլ չհավատացինք: Ամբոխը, կոլտնտեսության շների համար տարա ծություն թողած, գորշ պատի պես, գյուղի ճանապարհը փակած, լուռ կանգնել, սպասում էր: Շները, ձնագնդից ողետրված, նետվեցին: Մորիկը մի հարվածով երկուսին տապալեց, երրորդին կրծքով այնպես խփեց, որ այն երկար ժամանակ չէր կարողանում բարձրանալ: Ու դարձավ, չգիտես՝ գյուղ էր ուզում գնալ, թե ժողովրդի հետ իր ետեից վագոդ տիրոջ մոտ՝ հավելու նրա ոտների: Ջիուդ Մուկուշը կռացավ, իբրեւ քար է վերցնում՝ չթողեց: Բռան մեջ սեղմած ձյունը գցեց բերանը ու շրջված ամբոխից՝ սրթսրթալով, միզում էր ձյունների մեջ: Շունը, դարձյալ համաշափ քայլքով, սկսեց վազել: Կարճատեւ հանգստացած ամբոխն էլ վազեց: Ջիուդ Մուկուշը, շավարը կոճկելով, տրակտորիստ Ջարմիկին գոռաց . «Քաղաք քաշվելու չլինեի...»: Ասաց . «Տիրուները ծնած կովի հետ փոխողի...»: Նրա կապտավուն ստվերը սպիտակ ձյան վրա բարակ ու երկար-երկար էր:

Ջարմիկն ասաց . «Այ քեզ շուն, դրանց ոնց ավլեց, իստկեց...»: Ասաց . «Ուզում է դրանցից տասնհինգ հատ չէ, քսան էլ լինեն, բան դուրս չի գա, ախր վախենալու չափ ճերմակ է, դրա համար էլ աչք ու ատամ չի բռնում... մի հրացան լինեի...»: Ամբոխից փափախավոր մեկին ուղարկեց որսորդ Բագրատենց տուն: Ասավ . «Հավատացած եմ, գրագ կգամ, գյուլլա էլ չի բռնի»: Կոլտնտեսության տասնհինգ շները հովիվների տաք քրսքրսներից չէին ողետրվում: Մի քանիսը կանգնեցին, արմատիքներ էին հոտոտում ու գուղձերին միզում: Հետո էլ ետ դարձան ու գնացին կոլտնտեսության գոմերի կողմը: Հովիվներից մեկն ասաց . «Ափսոս, քոլլո Ջալիկը չկար, Ջալիկը լինեի, ձեռաց հարցերը կլուծեի, էնի ետեից է խփում՝ ուղիղ ամորձիքին...»: Հետո ձեռը դրած ճակատին՝ նայեց գոմերի դիմացի գորշ սարին: Բոլորս էլ, ձեռներս վահանակի ճակատներիս դրած, նայեցինք գորշ, քարկիտուկ սարին: Ասավ . «Այ, սատկես դու, մկների հետ է խաղում...»: Բոլորս նորից նայեցինք ու չտեսանք, բայց մեզանից ամեն մեկը հավատացած էր, որ նա այնտեղ մկների հետ է խաղում: Հովիվը երկու ձեռքի գույգ մատները դրեց բերանը՝ երկար, տաք, հույսով ու տազնապալի սուլեց մի քանի անգամ: Նայող՝ չտեսնողներիս ասաց . «Գալիս է...»: Ճակատի քրտինքը փափախով սրբեց: Մենք էլ ճակատներիս քրտինքը փափախներով սրբեցինք: Թքեց, ասաց . «Գալիս է... Էնտեղ իր արհեստի վերաբերյալ դաս է

սովորում...»:

Մորիկը վագում էր, ամբոխն էլ վագեց: Թիկունքում կապտավուն մշուշի մեջ մնացած գյուղը հազիվ էր նկատվում: Նա արդեն հասնում էր «Քոռ կամրջի» գունավոր գուլորշիներ արձակող տաք ճահիճներին, որի եղեգնուտներում ջրահարսներն էին բնակվում: Սաքոն վագքի պահին գոռաց . «Էս անտեր շունն էլ էնքան հպարտ է, որ ուրիշի տանը ապրողը չէ»: Նա հազիվ նկատելի գունատ էր, լսողներից ոչ մեկս էլ չհավատացինք:

Պոչատ Ջալիկը ահագին տարածություն կտրած եկավ, հասավ հովիվներին: Դեպի գոմերը գնացող շները, նրա թափով վագքը տեսած, նորից եկան: Հովիվներից մեկը ճանապարհին հաստ մի ճյուղ էր ջարդել, գետի ափով Մորիկին համընթաց վագեց-վագեց ու վերելից ներքեւ հասցրեց մեջքին: Սայթաքուն սառցի վրա, հարվածի թափից, ոտները տակից փախան, կիսաընկած մի քիչ սահեց ու առանց կաղկանձի ոտքի կանգնեց: Հարվածից խրախուսված՝ պոչատ Ջալիկը նետվեց առաջ: Նա սրընթաց հասավ, մտավ ետելի ոտների արանքը ու որսաց ամորձիքը: Մորիկը այդպիսի հարձակման չէր սպասում ու հանկարծակիի եկավ: Մյուս շներն էլ հարձակվեցին: Հետո դարձդարձիկ պոչը բացվեց, ու նա ընկավ: Ահագին ժամանակ՝ մի քսանհինգ-երեսուն րոպե, նրա երկինք պարզած ետելի ոտները դողում էին, իսկ ոհմակը գտել էր նրա քներակը, կոկորդը բերանն առած՝ խեղդում էր: Մորիկի գույնը փոխվեց, մարմինը ստվերի նման դարձավ՝ առանց ծավալի ու թեթևացավ...

Այդ ձմռան դեպի գյուղ փչող փոթորկոտ քամիներից հետո գարնանը ոչ մի սպիտակաթերթ բալենի չծաղկեց: Իսկ «Քոռ կամուրջը» լքած ջրահարսները այլևս չվերադարձան եղեգնուտ: